ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2023-2025

Բովանդակություն

Հապավումների և եզրույթների ցանկ 2

Խնդիրը 3

Նպատակը 7

Ակնկալվող արդյունքները 8

Ռազմավարության հաջողության ցուցիչները 8

Ռազմավարության թիրախները 13

Ռազմավարական ուղղությունները 14

Ուղղություն 1-ին: Հզորացնել ՀՀ ինստիտուտների կարողությունը ապատեղեկատվությունը կանխելու, հայտնաբերելու և վերլուծելու նպատակով 15

1.1 Բարելավել պետական կառույցների ռազմավարական հաղորդակցությունը և հզորացնել ռեսուրսները 15

1.2 Բարելավել պետական կառույցների պրոակտիվ հրապարակայնությունը 18

1.3 Ներդնել պետական կառույցների թափանցիկության և հաշվետվողականության գնահատման համակարգ 19

Ուղղություն 2-րդ: Փոխգործակցության բարելավում և մասնավոր հատվածի մոբիլիզացիա 22

2.1 Աշխատանքային խմբի ստեղծում 22

2.2 Փոխգործակցություն փաստեր ստուգող հարթակների հետ 23

2.3 Փոխգործակցություն մեդիայի համակարգավորման և ինքնակարգավորման խթանման նպատակով 24

2.4 Մասնավոր հատվածի ներգրավում և մոբիլիզացիա 25

Ուղղություն 3-րդ: Բարձրացնել մեդիաազատությունների վերաբերյալ գիտելիքի և մեդիակրթության մակարդակը՝ ձևավորելով ապատեղեկատվության հանդեպ հանրային դիմակայություն 27

3.1 Աշխատանք՝ մեդիագրագիտությունը հանրակրթության մեջ ներառելու ուղղությամբ 29

3.2 Մեդիագրագիտության զարգացման ուղղությունները 30

3.3 Անհրաժեշտ գործողություններ և լուծումներ 31

Հապավումների և եզրույթների ցանկ

ԱԳՆ - Արտաքին գործերի նախարարություն

ԻԱԿ- Ինֆորմացիայի ազատության կենտրոն

ԻԾ - իրական շահառու

ՄՆԿ- Մեդիա նախաձեռնությունների կենտրոն

ՆՈՒՀ - նախադպրոցական ուսումնական հաստատություն

ՏԱ- տեղեկատվության ազատություն

ԿԳՄՍ- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՔՀԿ - քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Պրոակտիվ հրապարակայնություն – հրապարակայնություն՝ սեփական նախաձեռնությամբ

Բազմակողմ հաղորդակցություն – տարբեր մակարդակներում հաղորդակցման հաստատում՝ ապահովելու գործընկերային միջավայրի և հաղորդակցության համակարգի ստեղծումը

Հիբրիդային տեղեկատվական գրոհ – արտաքին և ներքին միաժամանակյա տեղեկատվական գրոհ

Պաշտոնական կայքերի թարմացված ստանդարտ – արդիական չափանիշների ամբողջություն, որոնց պետք է համապատասխանի գոյություն ունեցող/ստեղծվող յուրաքանչյուր պետական/պաշտոնական կայք

Ժամանակին հրապարակված տեղեկություն – Տեղեկատվության ազատության մասին օրենքով սահմանված ժամկետում տեղեկատվության հրապարակում

Մասնավոր հատվածի մոբիլիզացիա – մասնավոր հատվածի ներգրավվածություն, ակտիվացում

Դրդող բովանդակություն – որևէ գործողության դրդող, կարծիք ստեղծող, որոշումների կայացման վրա ազդող բովանդակություն: Փափուկ ուժի կիրառման գործիքներից մեկը:

Հաղորդակցության պրոտոկոլ – արդյունավետ հաղորդակցության ապահովման նպատակով ստեղծված կանոնների համակարգ, որն ապահովում է այդ համակարգի գործունեությունը տարբեր իրավիճակներում:

Խնդիրը

Ապատեղեկատվությունն մշտապես գոյություն ունեցող, անընդհատ շրջանառվող և տարածվող սպառնալիք է, որը կարող է լուրջ սպառնալիք լինել պետության և հասարակության համար՝ կախված ապատեղեկատվության ծավալներից, թիրախային լսարանից, այն տարածողի նպատակներից և այլն: Վերջին տարիներին բարդագույն ճգնաժամերին առերեսվող Հայաստանի Հանրապետության համար ապատեղեկատվությունը նաև անվտանգության մարտահրավեր է: Այն միաժամանակ սպառնում է երկրում ընթացող և նոր նախաձեռնված բոլոր բարեփոխումներին ու զարգացումներին:

Ապատեղեկատվությունը լրջագույն վնաս է հասցնում հասարակության բոլոր շերտերին, տնտեսական գործունեության կազմակերպմանը և քաղաքականության իրացման գործընթացին. այն ուղղակիորեն կապված է քաղաքացիների, հասարակության, կառավարության, գործարար միջավայրի առօրյա կենսագործունեությանը: Հանրային վնասը ներառում է սպառնալիք ժողովրդավարական գործընթացներին և արժեքներին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բարօրությանն ու անվտանգությանը:

Ապատեղեկատվության հետևում կանգնած դերակատարները կարող են լինել ներքին, կամ արտաքին՝ ներառյալ պետական (տարբեր կառավարությունների կողմից հովանավորվող) և ոչ պետական դերակատարները: Ըստ տարբեր հետազոտությունների՝ [1] 30-ից ավելի պետություններ օգտագործում են ապատեղեկատվության գործիքներ, այդ թվում՝ իրենց երկրներում: Ապատեղեկատվական արշավները կանոնավոր են, երբեմն համակարգված և ֆինանսավորվող՝ կազմելով լայնամասշտաբ հիբրիդային սպառնալիքի մի մասը և օգտագործելով բազմազան գործիքներ և լծակներ՝ ներգրավելով նաև ոչ պետական դերակատարներ[2]:

Քաղաքական դերակատարները նույնպես օգտագործում են կեղծ տեղեկություններ ՔՀԿ-ների գործունեության, օտարերկրյա դոնոր կազմակերպությունների և նրանց ենթադրյալ քաղաքական նպատակների մասին: Սա թույլ է տալիս թիրախավորված տեղեկատվական արշավներ իրականացնել պառակտելու և ժողովրդավարական գործընթացներին խոչընդոտելու նպատակով:[3]

Արտակարգ իրավիճակների, պատերազմական գործողությունների, ինչպես նաև ճգնաժամային այլ իրավիճակների ընթացքում ապատեղեկատվության տարածման ծավալները զգալիորեն աճում են, որը կարող է հանգեցնել հանրության շրջանում խուճապային տրամադրության առաջացմանը, նպաստել հանրության բևեռացմանը՝ դժվարեցնելով կեղծ տեղեկատվական հոսքերի կառավարելիությունը: Ապատեղեկատվության տարածմանը կարող են նաև նպաստել կեղծ ահազանգերը, որոնք

[1] Տե՛ս Ֆրիդրմ Հաուս, 2017, https://freedomhouse.org/report/freedom-net:

[2] Տե՛ս Հայաստանյան մեդիա ոլորտի քարտեզագրում ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, http://www.foi.am/hy/research/item/2183/:

[3] Տե՛ս Հայաստանյան մեդիա ոլորտի քարտեզագրում ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2021 թ., http://www.foi.am/hy/research/item/2183/ :

կարող են բնակչության շրջանում առաջացնել խուճապ և խաթարել պետական մարմինների և կազմակերպությունների անխափան գործունեությունը: Արդյունքում օգնություն ակնկալող քաղաքացիները հնարավոր է զրկվեն օպերատիվ և ժամանակին սպասարկումից:

Սոցիալական հարթակները դարձել են ապատեղեկատվության տարածման հիմնական միջավայր: Վերջին հետազոտությունները վկայում են, որ մասնավոր հաղորդագրությունների ծառայություններն ավելի ու ավելի են օգտագործվում ապատեղեկատվություն տարածելու նպատակով[4]: Մեթոդներն են՝ մանիպուլացիոն բնույթի տեղեկատվության(այդ թվում՝ կեղծ փաստաթղթերի), տեսագրությունների (deep fakes) տարածումը ինտերնետ ավտոմատացված ծրագրային ապահովման (բոտերի) միջոցների օգնությամբ, սոցցանցերի օգտատերերի նկատմամբ ինտերնետ-հալածանքները(տրոլինգ):

Մեկ այլ հետազոտությամբ[5] պարզվել է, որ կեղծ պատմությունները տարածվում են նաև սոցիալական մեդիայի ազդեցիկ օգտատերերի (influencer), խմբերի և ալիքների, ինչպես նաև յուրահատուկ բովանդակություն չստեղծող, լրատվություն պատճենող, կիսազվարճացնող և կիսալրատվական առցանց լրատվամիջոցների միջոցով: Փաստերի ստուգմամբ զբաղվող տեղական կազմակերպությունները պարզել են, որ սոցիալական մեդիայում ազդեցություն ունեցող անձինք, որոնք առնչվում են հստակ քաղաքական ուժերի հետ, ապատեղեկատվության տարածման աղբյուր են դարձել:

Ապատեղեկատվությունը հասնելով հանրության լայն շրջանակներին կամ իր հետապնդած թիրախին, անցնում է որոշակի ճանապարհ: Ապատեղեկատվությունը, նախ և առաջ ստեղծվում է, այնուհետև այն վերածվում է մեդիա արտադրանքի և ի վերջո հաղորդագրությունը հրապարկվում և տարածվում է: Այս փուլերի վեր հանումն ու վերլուծությունը կարևոր է, քանի որ հաճախ, ապատեղեկատվություն ստեղծողը և, օրինակ՝ տարածողը կարող են լինել տարբեր շրջանակներ: Ուստի, ապատեղեկատվության դեմ պայքարի համար կարևոր է նման բաժանումը և վերլուծությունը, քանզի այն հնարավորություն կտա տանել առավել թիրախային պայքար: Այս համատեքստում կարևոր է Եվրոպայի խորհրդի 2017 թվականի ապատեղեկատվության վերաբերյալ՝ ապատեղեկատվության դեմ պայքարի քաղաքականության մշակմանն օժանդակող զեկույցը, որում հստակ ամրագրված են ապատեղեկատվության տեսակները[6]: Առանձնացվում է ապատեղեկատվության երեք տեսակ (Dis-information, Mis-information and Malinformation): Դրանցից առաջինը (Dis-information) այն տեղեկություններն են, որոնք կեղծ են և դիտավորյալ ստեղծվել են անձին, սոցիալական որևէ խմբի, կազմակերպության կամ երկրին վնասելու համար: Հաջորդն (Mis-information) այնպիսի տեղեկությունն է, որը, չնայած կեղծ է, բայց չի ստեղծվել դիտավորությամբ վնաս պատճառելու համար: Տեսակներից վերջինը (Malinformation) այն տեղեկություններն են, որոնք չնայած կեղծ չեն, սակայն օգտագործվում են ինչ որ մեկին, կամ ինչ որ խմբի վնասելու համար:

---

[4] Տե՛ս EU Action Plan Against Disinformation, https://www.eeas.europa.eu/sites/default/files/action_plan_against_disinformation.pdf, էջ 4.

[5] Տե՛ս Ապատեղեկատվության տարածման օրինաչափությունները հայաստանյան առցանց մեդիայում, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2021, https://media.am/hy/lab/2021/03/12/26664/:

[6] Տե՛ս https://rm.coe.int/information-disorder-report-version-august-2018/16808c9c77 :

Չնայած ապատեղեկատվության լայն տարածվածությանը՝ Հայաստանում դեռևս մշակված չէ ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարական որևէ փաստաթուղթ: Ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարության բացակայության պատճառով Հայաստանի հասարակությունը մնում է անտեղյակ և խոցելի տեղեկատվական վակուումը լրացնող կեղծ պատմությների հանդեպ[7]: Կարևորագույն մարտահրավերներից մեկը նաև կեղծ պատմությների տարածումն է ինչպես ներքին, այնպես էլ՝ արտաքին աղբյուրների միջոցներով: Առաջին պարագայում այն լրջագույն սպառնալիք կարող է լինել հասարակության, հասարակության առանձին խմբերի, կառույցների և կազմակերպությունների համար, այդ թվում՝ և՛ պետական և՛ մասնավոր: Բացի այդ, մասնավորապես արտաքին լրատվական դաշտում տվյալ երկրի, հանրության վերաբերյալ կեղծ պատմությների տարածումը կարող է լրջագույն վնաս պատճառել միջազգային հանրության շրջանում տվյալ պետության հեղինակությանը՝ առաջացնելով բացասական և սխալ ընկալումներ ու հանգեցնելով տվյալ պետության և հանրության համար բացասական հետևանքների: Այս առումով հատկապես կարևոր է ապատեղեկատվության դեմ պայքարում ՀՀ միջազգային գործընկերների հետ փոխգործակցության զարգացման անհրաժեշտությունը քաղաքական, տեխնոլոգիական և մասնագիտական մակարդակներում՝ ՀՀ պետական քաղաքականության վերաբերյալ արտաքին տեղեկատվական հարթակներում ճշգրիտ տեղեկատվության տարածման մեխանիզմների ձևավորմամբ, տեղեկատվական գործողությունների իրականացման մասով ՀՀ-Սփյուռք կապերի ամրապնդմամբ, ՀՀ իմիջի բարձրացմանն ուղղված տեղեկատվական արշավների կազմակերպմամբ, գործընկեր երկրների տեղեկատվական հակազդման համար պատասխանատու մարմինների հետ համագործակցության ծավալմանն ուղղված արդյունավետ մեխանիզմների մշակմամբ և ներդրմամբ, խաղաղ և պատերազմի ժամանակ հակառակորդի հեղինակության թուլացմանն ուղղված միջոցառումների սահմանմամբ, ոլորտին առնչվող գիտաժողովներին մասնակցությամբ:

Կեղծ տեղեկատվության և ապատեղեկատվության ամենամեծ վնասը, թերևս քաղաքացիների և պետության միջև վստահության խարխլումն է, քանի որ կեղծ պատմությների մի խումբ, ըստ հետազոտությունների՝ նպատակ ուներ քայքայել պետական մարմինների, գործընթացների և առաջարկությունների օրինականությունը հասարակության աչքում[8]:

Մինչ այժմ Կառավարության քայլերը մեդիագրագիտության բարձրացման ուղղությամբ կրել են հատվածական բնույթ, որի արդյունքում հանրության ոչ բոլոր շերտերն են ներգրավվել մեդիագրագիտության ձևավորմանն ու զարգացմանը:

Հանրային հետաքրքրության հարցերը պետական մարմինների կողմից որոշ դեպքերում ունենում են ժամանակային խզվածք և մատչելիության հետ կապված խնդիրներ, որոնք առաջացնում են տեղեկատվական բաց, որն էլ լցվում է կա՛մ կեղծ և մանիպուլյատիվ տեղեկատվությամբ, կա՛մ մնում է դատարկ՝ խարխլելով հանրային վստահությունը պաշտոնական տեղեկատվության հանդեպ:

---

[7] Տե՛ս Ֆրիդրիխ Հաուս, Ապատեղեկատվությունն ու կեղծ տեղեկատվությունը Հայաստանում. դիմակայելով կեղծ պատմություններին, 2021թ., Disinformation-in-Armenia_Am-final.pdf (freedomhouse.org), էջ 14:

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 46:

Կառավարությունը և Ազգային Ժողովը ժամանակ առ ժամանակ հանդես են եկել օրենսդրական տարբեր նախաձեռնություններով՝ փորձելով ստեղծել որոշակի կարգավորումների շրջանակ ապատեղեկատվության դեմ պայքարելու և ատելության խոսքն ու անօրինական բովանդակության ծավալը նվազեցնելու նպատակով: Սակայն այդ օրենսդրական նախաձեռնությունները հիմնականում հատվածային բնույթ ունեին: Միաժամանակ, դրանք պրոֆեսիոնալ լրագրողական համայնքի կողմից հիմնականում գնահատվել են որպես խոսքի և մամուլի ազատության սահմանափակման դրսևորումներ: Մի կողմից, հասարակության շրջանում առկա է լրագրողի մասնագիտության նկատմամբ կանխակալ վերաբերմունք, որը մեծապես խանգարում է արհեստավարժ լրագրության զարգացմանը, մյուս կողմից հաճախակի են նաև լրագրողական էթիկայի խախտման դեպքերը, լրագրողական միջավայրում նկատելի է բարեխղճության պակաս:

Ապատեղեկատվության հաղթահարումը պահանջում է շարունակական, միասնական ու համալիր ջանքեր, համակարգված արձագանք, համապատասխան դերակատարներ, վեկտորներ, գործիքներ, մեթոդներ, առաջնահերթ թիրախներ և ազդեցություն[9]:

Սույն փաստաթուղթը ՀՀ Կառավարության ռազմավարությունն է, որը համախմբում է կառավարության, քաղաքացիական հասարակության և քաղաքացիների ջանքերը՝ ուղղված ապատեղեկատվության դեմ պայքարին: Ազգային ռազմավարությունը նախատեսում է ապատեղեկատվության դեմ պայքարի շրջանակը, նպատակը, ժամանակակից մեթոդներն ու գործիքակազմը:

Փաստաթուղթը սահմանում է ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարական ուղղությունները, որոնցով պետք է առաջնորդվի ՀՀ կառավարությունը հասարակության, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցվելիս: Այն նախատեսում է հրատապ և անհետաձգելի գործողությունների համալիր Հայաստանի Հանրապետությունը, նրա ինստիտուտներին և քաղաքացիներին ապատեղեկատվությունից պաշտպանելու նպատակով:

[9] Տե՛ս EU Action Plan Against Disinformation, https://www.eeas.europa.eu/sites/default/files/action_plan_against_disinformation.pdf, էջ 3:

Նպատակը

Ռազմավարության գլխավոր նպատակն է ՀՀ-ում ապահովել պատշաճ արձագանք ընդդեմ ապատեղեկատվության՝ կանխարգելելով, նվազեցնելով ու չեզոքացնելով ապատեղեկատվության ռիսկերը:

Ռազմավարության ենթանպատակներն են.

- **Քաղաքացիական կրթության ազգային ծրագրերի միջոցով ձևավորել հանրային հակազդեցություն ապատեղեկատվության նկատմամբ:**

Այս նպատակը ենթադրում է ապատեղեկատվության և այն տարածող աղբյուրների նկատմամբ հասարակության բացասական վերաբերմունքի ձևավորում: Բարձրացնել իրազեկումը և մեդիաազատությունների և մեդիագրագիտության վերաբերյալ կրթության մակարդակը՝ ձևավորելով ապատեղեկատվության հանդեպ հանրային դիմակայություն: Մեդիագրագիտության բարձրացումը քաղաքացիներին կտա ապատեղեկատվությունը տարբերակելու, տեղեկատվության նկատմամբ վերլուծական ու քննադատական վերաբերմունք դրսևորելու ունակություններ:

- **Նպաստել պաշտոնական տեղեկությունների մատչելիությանը և պրոակտիվ հաշվետվողականությանը:**

Ապատեղեկատվության դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցներից մեկը պրոակտիվ ու բազմակողմ հաղորդակցությունն է:

- **Ստեղծել ապատեղեկատվության, հիբրիդային տեղեկատվական գրոհների/արշավների կանխարգելման/տարածման նվազեցման և հակազդեցության գործուն մեխանիզմներ՝ հաշվի առնելով, ներդնելով և տեղայնացնելով միջազգային լավագույն փորձը:**

Սույն նպատակի համար անհրաժեշտ են հստակ նորարարական և արդյունավետ մեխանիզմներ: Այս գործում առանցքային է նաև մասնավոր հատվածի հետ ակտիվ փոխգործակցությունը:

- **Կարողությունների զարգացման ծրագրերի միջոցով հզորացնել ՀՀ պետական կառույցների կարողությունը ապատեղեկատվությունը կանխելու, հայտնաբերելու և վերլուծելու նպատակով:**

Ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետ գործիքներից մեկը հաղորդակցության մասնագետների կարողությունների և տեղեկատվության հետ աշխատելու կարողությունների զարգացումն է: Անհրաժեշտ է բարելավել պետական կառույցների ռազմավարական հաղորդակցությունը, ուժեղացնել հաղորդակցության ստորաբաժանումների մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսները:

Ակնկալվող արդյունքները

- Սույն ռազմավարության նպատակների և ուղղություններին միտված պետական քաղաքականության մշակում և իրականացում
- Քաղաքացիների մեդիաազատությունների վերաբերյալ գիտելիքի և հմտությունների զարգացում, որը կհանգեցնի ապատեղեկատվության ռիսկերի կառավարման և ապատեղեկատվության տարածման կրճատմանը,
- Մեդիագրագիտության հայեցակարգի և գործողությունների պլանի մշակում և ընդունում, դրա հիման վրա հանրակրթության մեջ մեդիագրագիտության ինտեգրման ուղեցույցների և կրթական ծրագրերի ստեղծում և դասավանդում՝ որակավորված մասնագետների կողմից,
- Պետական կառույցների առավել թափանցիկ, հաշվետու աշխատանքին միտված ձևաչափերի և հարթակների գործարկում, առկա ռեսուրսների բարելավում,
- Պետական կառույցներում հաղորդակցության մասնագետների աշխատանքի բարելավում, մեդիագրագիտության և փաստերի ստուգման հմտությունների զարգացում,
- Ապատեղեկատվության դեմ պայքարում պետություն - մասնավոր հատվածի ակտիվ փոխգործակցության ապահովում, մասնավոր հատվածի թափանցիկության ու հաշվետվողականության բարելավում:

Ռազմավարության հաջողության ցուցիչները

Ռազմավարության հաջողության ցուցիչներն են.

Նպատակ	Ցուցիչ	Չափման համակարգ	Ակնկալվող արդյունքը

Հզորացնել ՀՀ ինստիտուտների կարողությունները՝ ապատեղեկատվությունը հայտնաբերելու, դրա տարածումը սահմանափակելու, ապատեղեկատվության մասին հանրությանը պատշաճ իրազեկելու և իրականացրած աշխատանքների արդյունքները վերլուծելու նպատակով	● Պետական գերատեսչությունների հաղորդակցության ստորաբաժանումների աշխատակիցների առնվազն 50%-ն ունեն ապատեղեկատվության դեմ պայքարի գործնական գիտելիք և հմտություններ: ● Պետ. մարմինների հաղորդակցության ստորաբաժանումների կարիքների 60%-ը բավարարված է: ● Ուղեցույցները և խորհրդատվական կարգերը մշակված և ընդունված են: ● Ռազմավարական հաղորդակցության ստորաբաժանման ձևավորման պատկերացումներն ու կարգավորումներն հստակեցված են: ● Իրականացվել է հաղորդակցության ռազմավարության և սոցիալական մեդիա հարթակներում վարվելակերպի կանոնների և կիբերանվտանգության ուղեցույցի կատարման մոնիթորինգ: Ներդրվել է անհամապատասխանության վերացման համար մեխանիզմ:	● Աշխատանքի արդյունավետության գնահատման հետազոտություն ● ՔՀԿ և միջազգային գործընկերների հետազոտություններ, մշտադիտարկման արդյունքներ	● Պետական կառույցների հաղորդակցության ստորաբաժանումների միասնական կառուցվածքի ձևավորում ● Պետական կառույցների առավել թափանցիկ, հաշվետու աշխատանքին միտված ձևաչափերի և հարթակների գործարկում, առկա ռեսուրսների բարելավում ● Կառավարության ընդհանուր հաղորդակցության ռազմավարության մշակում և ընդունում: ● Տարբեր իրավիճակներում հաղորդակցության հաղորդակարգերի /standard operating procedures/ մշակում և ընդունում ● Կանոնավոր մասնագիտական վերապատրաստումներ և անձնակազմի հաղորդակցության կարողությունների զարգացում ● Մեկ կառավարություն բրենդի, բրենդբուքի հիման վրա տարբեր վիզուալների ընդունում: Բրենդինգը կիրառվում է պետական հաղորդակցության բոլոր միջոցներում
Նպաստել պաշտոնական տեղեկությունների մատչելիությանը և	● Պաշտոնական կայքերի միասնական և թարմացված	● Հանրային կարծիքի ուսումնասիրություն տարին մեկ անգամ	● Սույն ռազմավարության նպատակների և ուղղություններին

պրոակտիվ հաշվետվողականությանը:	ստանդարտի մշակում և ընդունում ● Պաշտոնական կայքերի առնվազն 70 տոկոսը մատչելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար, հրապարակված տվյալները համապատասխանում են բաց տվյալներ ձևաչափին, պարունակում են լիարժեք ու ժամանակին հրապարակված տեղեկություններ: ● Տեղեկատվության ազատության միասնական վիճակագրությունը հրապարակվում է բոլոր պետական կառավարման մարմինների կողմից՝ միասնական ձևաչափին համապատասխան: ● Ներդվել են պետական կառույցների թափանցիկության և հաշվետվողականության ինքնագնահատման և գնահատման համակարգերը	(նախնական (baseline) և վերջնական (endline)) ● Պաշտոնական կայքերի մշտադիտարկման արդյունքներ ● Տեղեկատվության ազատության մշտադիտարկման արդյունքներ ● Պետական մարմինների Տեղեկատվության ազահության պաշտոնական ամենամյա վիճակագրություն ● Անձնական տվյալների պաշտպանության գործակալության տարեկան հաշվետվություններ ● Տեղեկություն տնօրինող պետական մարմինների տարեկան հաշվետվություններ ● Մասնագիտացած ՔՀԿ-ների դիտարկումների արդյունքներ	միտված պետական քաղաքականության մշակում և իրականացում ● Պետական կառույցների առավել թափանցիկ, հաշվետու աշխատանքին միտված ձևաչափերի և հարթակների գործարկում, առկա ռեսուրսների բարելավում ● Պաշտոնական կայքերի միասնական ստանդարտի բարեփոխում ● Տեղեկատվության ազատության ամենամյա վիճակագրության կազմման և հրապարակման ապահովում պետական կառավարման մարմինների կողմից
Ստեղծել ապատեղեկատվության, հիբրիդային տեղեկատվական գրոհների/արշավների կանխարգելման/տարածման նվազեցման և հակազդեցության գործուն մեխանիզմներ՝ հաշվի առնելով, տեղայնացնելով և	● Փոխգործակցության նպատակով ձևավորել երկխոսության կայուն հարթակ մասնավոր հատվածի ներգրավմամբ և մասնակցությամբ ● Մասնավոր հատվածի հաշվետվողականության ու	● Փոխգործակցության խմբի աշխատանքի արդյունավետության չափմանն ուղղված հետազոտություն ● Մեդիա մշտադիտարկում ● Հանրային կարծիքի ուսումնասիրություն (նախնական (baseline) և վերջնական (endline)	● Ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ համագործակցության հարթակների ստեղծում, ռեսուրսների քարտեզագրում, գործիքակազմի հաստատում ● Մեդիա ինքնակարգավորման

ներդնելով միջազգային լավագույն փորձը:	թափանցիկության խթանում ● Մասնավոր հատվածի կողմից ապատեղեկատվության դեմ պայքարի համար տեխնոլոգիական լուծում առաջարկող ծրագրերի ֆինանսավորում և մեկնարկ ● Մեդիա ինքնակարգավորման և արտադատական մարմինների շուրջ հանրային բարձր իրազեկվածություն և արդյունավետության բարձրացում ● Պետություն-սոցիալական հարթակներ ուղիղ երկխոսության խողովակների ստեղծում	● Արտադատական մարմիններին ուղղված տեղեկատվական վեճերը լուծելուն միտված դիմումների թիվ ● Տեղեկատվական վեճերի լուծմանն ուղղված դատական գործերի թվի կրճատում	զարգացման հայեցակարգի ընդունում ● Կարգավորող անկախ մարմնի (Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով) լիազորությունների շրջանակի ընդլայնում՝ ընդգրկելով մեդիագրագիտության զարգացումը որպես պարտադիր բաղադրիչ ● Կարգավորող մարմնի կողմից հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված 6 իրազեկման արշավի իրականացում մեդիաների դերի և առաքելության, կարգավորման և ինքնակարգավորման մարմինների դերի և գործառույթների, ինչպես նաև մեդիաների իրական շահառուների թափանցիկության կարևորության և կարգավորումների վերաբերյալ: ● Աջակցություն ստացած 3 նորարարական գաղափարների ներդրում պետական կառավարման համակարգում ● Մասնավոր ընկերությունների խրախուսման մեխանիզմների ներդրում՝ այդ թվում օրենսդրական նախաձեռնությունների միջոցով ● Տարեկան առնվազն 10 հետազոտության իրականացում միջազգային հեղինակավոր գիտական կենտրոններում և

			համալսարաններում համաձայն կնքված համագործակցության հուշագրերի հիման վրա
Քաղաքացիական կրթության ազգային ծրագրերի միջոցով ձևավորել հանրային հակազդեցություն ապատեղեկատվության նկատմամբ	● Մեդիագրագիտության ծրագրերի համակարգման խմբի ստեղծում ● Մեդիագրագիտության հայեցակարգի և գործողությունների պլանի մշակում և ընդունում ● Հանրակրթության համակարգում մեդիագրագիտության կրթական մոդուլի ներդրում ● Առնվազն 5 ԲՈՒՀ-ում մեդիագրագիտություն առարկայի ներմուծում բոլոր մասնագիտությունների ուսանողների համար ● Նուի և դպրոցի մանկավարժների, ԲՈՒՀ-երի դասախոսների կարողությունների և հմտությունների զարգացում ● Գրադարաններում (հանրային և դպրոցական) մեդիակենտրոնների հիմնում ● Մեծահասակների համար հասանելի առցանց կրթական ռեսուրսի ստեղծում, որը մեկտեղում է տարբեր կազմակերպություններ	● Կրթական ծրագրերի արդյունավետությունը չափող հետազոտություն ● Դասընթացների հաճախելիության մշտադիտարկում ● Հանրային կարծիքի ուսումնասիրում տարին մեկ անգամ (նախնական (baseline) և վերջնական (endline))	● Մեդիագրագիտության հայեցակարգի և գործողությունների պլանի մշակում և ընդունում, դրա հիման վրա հանրակրթության մեջ մեդիագրագիտության ինտեգրման ուղեցույցների և կրթական ծրագրերի ստեղծում և դասավանդում՝ որակավորված մասնագետների կողմից ● Մեդիագրագիտությունն ինտեգրում հանրակրթության մեջ՝ համաձայն նոր չափորոշչի ● Ինտեգրման ուղեցույցները մշակվել են ՆՈՒՀ-երի համար և կիրառվում են ● ՆՈՒՀ-երն ու դպրոցները զինված են անհրաժեշտ սարքավորումներով՝ մեդիա սպառման և մեդիա ստեղծման համար (հաստատությունների 30%-ը) ● ՆՈՒՀ-երի և դպրոցների համար մշակվել են կիբերանվտանգության ուղեցույցներ և մեխանիզմներ, ապահովված է անվտանգ և որակյալ համացանց (հաստատությունների առնվազն 50%-ում): ● Մեդիագրագիտության կամընտրական

	րի մշակած կրթական ռեսուրսները		առարկա է ներդրվել բոլոր պետական բուհերում, նաեւ առաջարկվել է մասնավոր բուհերին։ ● Լայն հանրության շրջանում մեդիագրագիտության տարածման նպատակով իրազեկման արշավների իրականացում ● Մեդիագրագիտության ռեսուրսների միասնական հարթակը հասանելի է բոլոր հետաքրքրված կողմերին, կառույցներին, լայն հանրությանը։ ● Քաղաքացիների մեդիաազատությունների վերաբերյալ գիտելիքի և հմտությունների զարգացում, որը կհանգեցնի ապատեղեկատվության ռիսկերի կառավարման և ապատեղեկատվության տարածման կրճատմանը

Ռազմավարության թիրախները

Ռազմավարության թիրախային խումբը բավական ընդգրկուն է՝ հաշվի առնելով աշխատանքային խմբի կողմից գործողությունների մշակման և արդյունքների մշտադիտարկման գործառույթը: Վերջնական արդյունքում նախատեսվում է ուղղակի կամ անուղղակի ձևով ընդգրկել ՀՀ բնակչության առնվազն 70%-ը՝ ներառելով տարբեր տարիքային շեմ ունեցող և սոցիալական շերտերի թիրախներ, քանի որ ռազմավարության հաջողությունն ուղղակիորեն կախված է դրա գործողությունների ընդգրկունությունից:

Այնուամենայնիվ, առանձնացնենք մի քանի առաջնային թիրախներ, որոնք իրենց անմիջական մասնակցությամբ կարող են մեծ դերակատարում ունենալ մեդիագրագիտության բարձրացման վրա:

- Ուսուցիչներ
- Երիտասարդներ (ուսանողներ, երիտասարդական կառույցների շահառուներ)
- Դպրոցահասակ երեխաներ
- Ծնողներ
- Պետական մարմինների աշխատակիցներ, այդ թվում՝ հաղորդակցության և մարդկային ռեսուրսների կառավարման պատասխանատուներ,
- Ֆորմալ ընդհանուր կրթական համակարգից դուրս գտնվող մեծահասակներ (30-65 տարեկան)
- Մասնավոր հատվածի ներկայացուցիչներ(ՀԿ-ներ, անկախ փորձագետներ, վերլուծաբաններ և այլն)
- Արտաքին լսարան

Նշված առաջնային թիրախների հետ աշխատանքի արդյունքում հնարավորություն է ստեղծվում ազդեցություն գործել նաև երկրորդային թիրախային խմբերի և ողջ հանրության վրա:

Ռազմավարական ուղղությունները

ՀՀ Կառավարության ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարությունը ներառում է 3 ռազմավարական ուղղություն՝ համապատասխան 12 գործողությունների համալիրով:

Ուղղություն	Գործողություն
1. Հզորացնել ՀՀ ինստիտուտների կարողությունը՝ ապատեղեկատվությունը կանխելու, հայտնաբերելու, արձագանքելու և վերլուծելու նպատակով	1.1 Բարելավել պետական կառույցների ռազմավարական հաղորդակցությունը և հզորացնել հաղորդակցության ստորաբաժանումների մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսները 1.2 Բարելավել պետական կառավարման մարմինների պրոակտիվ հրապարակայնությունը 1.3 Ներդնել պետական կառույցների թափանցիկության և հաշվետվողականության գնահատման համակարգ
2. Փոխգործակցության բարելավում և մասնավոր հատվածի մոբիլիզացիա	2.1 Փոխգործակցության և երկխոսության բարելավում 2.2 Փոխգործակցություն փաստեր ստուգող հարթակների հետ

	2.3 Փոխգործակցություն մեդիայի համակարգավորման և ինքնակարգավորման խթանման նպատակով 2.4 Մասնավոր հատվածի ներգրավում և մոբիլիզացիա
3. Բարձրացնել իրազեկումը և մեդիաազատությունների ու մեդիագրագիտության վերաբերյալ կրթության մակարդակը՝ ձևավորելով ապատեղեկատվության հանդեպ հանրային դիմակայություն	3.1 Մեդիագրագիտության հայեցակարգի և գործողությունների պլանի մշակում և ընդունում՝ ներառական ձևաչափով 3.2 Մեդիագրագիտության ինտեգրում կրթության մեջ 3.3 Հանրակրթությունից դուրս մնացած խմբերի հետ աշխատանք 3.4 Հանրային(այդ թվում՝ համայնքային) ծառայողների վերապատրաստումներ և կարողությունների զարգացում

Ուղղություն 1-ին: Հզորացնել ՀՀ ինստիտուտների կարողությունը ապատեղեկատվությունը կանխելու, հայտնաբերելու և վերլուծելու նպատակով

1.1 Բարելավել պետական կառույցների ռազմավարական հաղորդակցությունը և հզորացնել ռեսուրսները

Ապատեղեկատվության դեմ պայքարի գործիքակազմում հաղորդակցությունը կարևոր ուղղություններից է: Երբ գոյություն ունի տեղեկատվական վակուում, այն շատ արագ լցվում է ապատեղեկատվությամբ, հետևաբար ժամանակին արված սպառիչ հաղորդակցությունը կարող է էականորեն նվազեցնել այդ վակուումը:

Ապատեղեկատվության դեմ պայքարի ու համապատասխան կրթական ծրագրերի արդյունավետությունը մեծապես կախված է թիրախային խմբերի և լայն հանրության իրազեկվածությունից:

Պետական կառույցների հաղորդակցության արդյունավետության բարձրացումը անհրաժեշտ է կազմակերպել հետևյալ քայլերն իրականացնելով.

- **Պետական կառույցների հաղորդակցության ստորաբաժանումների միասնական կառուցվածքի ձևավորում և համալրում մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով:**
- **Կանոնավոր մասնագիտական վերապատրաստումներ և անձնակազմի կարողությունների զարգացում:**
- **Ուղեցույցների և խորհրդատվական կարգերի մշակում և ընդունում:**

- Հաղորդակցությամբ զբաղվող ստորաբաժանումների աշխատանքի վերակազմակերպում:
- Կառավարության ընդհանուր հաղորդակցության ռազմավարության և հաղորդակցության արարողակարգի մշակում:

Պետական կառույցների հաղորդակցության ստորաբաժանումների միասնական կառուցվածքի ձևավորում, դրանց համալրում մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով:

Պետական կառույցների հաղորդակցության ստորաբաժանումները միմյանցից տարբերվում են կառուցվածքով: Դրանք ունեն իրարից տարբերվող հաստիքացուցակներ, և չկա միասնական մոտեցում:

Անհրաժեշտ է իրականացնել առկա իրավիճակի քարտեզագրում և վերլուծություն, որը թույլ կտա նոր մշակվող կառուցվածքում բացառել մի քանի նույնանման հաստիքների կրկնությունը և ունենալ ստորաբաժանումների միանման կառուցվածք, որը, պետական գերատեսչության առանձնահատկություններից ելնելով, կարող է որոշակի փոփոխությունների ենթարկվել: Այս ստորաբաժանումներում կնախատեսվի նաև ռազմավարական հաղորդակցությամբ զբաղվող մասնագետի հաստիք:

Կանոնավոր մասնագիտական վերապատրաստումներ և անձնակազմի կարողությունների զարգացում:

Հաղորդակցությունը արագ զարգացող ոլորտ է: Անընդհատ ի հայտ են գալիս տեղեկատվության տարածման և երկկողմ հաղորդակցության նոր գործիքներ և ուղղություններ: Պետական գերատեսչությունների հաղորդակցության ստորաբաժանումների աշխատակիցները պետք է կանոնավոր անցնեն վերապատրաստումներ, որոնք կարող են վերաբերել սոցիալական մեդիայի կառավարմանը, դիզայնին, ապատեղեկատվության դեմ պայքարին, ռազմավարական հաղորդակցությանը, վարքագծային գիտությանը և այլ թեմաների:

Հաղորդակցությամբ զբաղվող ստորաբաժանումների աշխատանքի վերակազակերպում:

Պետական գերատեսչությունների կողմից տեղեկատվության տարածումը պետք է ունենա 2 հիմնական ուղղություն՝ սեփական բովանդակության պրոակտիվ տարածում և կեղծ լուրերի դեմ պայքար/հերքումներ:

Ապատեղեկատվության դեմ հաղորդակցության ռազմավարությունը պետք է ավելի ինտենսիվ, կրկնվող և դրդող (nudge) բովանդակություն ունենա, որպեսզի կարողանա փոխլրացնել գործիքակազմի այլ ուղղություններին:

Անհրաժեշտ է ստեղծել կեղծ լուրերի արձագանքման/հերքման հստակ մեխանիզմ/արարողակարգ, որը կներառի հետևյալ քայլերը.

- Հաղորդակցությամբ զբաղվող ստորաբաժանումներում ունենալ մեկ պատասխանատու, որը կմշտադիտարկի և արագ կհայտնաբերի ոլորտին վերաբերող կեղծ տեղեկությունը:
- Կեղծ տեղեկության տարածման մասշտաբների կամ դրա ռիսկի գնահատում, որի վրա հիմնվելով պետք է որոշել ապատեղեկատվության արձագանքման անհրաժեշտությունը, մակարդակն ու հարթակը (մեկնաբանություն սոցիալական ցանցերում, մամուլի հաղորդագրություն, համապատասխան վարչության ղեկավարի հարցազրույց, գերատեսչության ղեկավարի հարցազրույց և այլն):
- Կեղծ տեղեկությունը հերքող բովանդակության մշակում, որը պետք է ստույգ լինի մասնագիտական տեսանկյունից, սակայն հեշտ ընկալելի լինի հասարակության կողմից:
- Գործնական ուղեցույցների/ռեսուրսների մշակում:

<u>Կառավարության ընդհանուր հաղորդակցության ռազմավարության և հաղորդակցության ուղեցույցի (արարողակարգ) մշակում:</u>

Պետական բոլոր կառույցներն աշխատում են կառավարության միասնական տեսլականի իրագործման ուղղությամբ և այդ տեսլականի բաղադրիչների վերաբերյալ անհրաժեշտ է մշակել մեկ միասնական հաղորդակցության ռազմավարություն, որը յուրաքանչյուր գերատեսչություն կտեղայնացնի ըստ իր մանդատի:

Բացի այդ՝ անհրաժեշտ է մշակել կառավարության միասնական ներկայացման համար անհրաժեշտ հաղորդակցության ուղեցույցներ և պրոտոկոլ՝ աշխատելով բարձրացնել ստեղծված «Կառավարության բրենդ»-ի հեղինակությունը:

Ապատեկեղեկատվության դեմ պայքարը պետք է դառնա միասնական հաղորդակցության ռազմավարության բաղադրիչներից մեկը, որի նպատակներն են.

- Ապատեղեկատվության տարածման հետ կապված ռիսկերի վերաբերյալ հանրային լայն իրազեկում,
- Ապատեղեկատվության դեմ պայքարի գործիքակազմի ներկայացում և դրա իրականացման համար հանրային աջակցության ապահովում,
- Ապատեղեկատվության վերհանման և չտարածման համար անհրաժեշտ քայլերի և գիտելիքի հանրայնացում,
- Փաստեր ստուգող հարթակների հանրայնացում:

Հաղորդակացության ռազմավարությունը համակարգող և իրականացնող մարմիններն են.

Հաղորդակցության ռազմավարությունը համակարգող մարմինը ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ն է:

Ռազմավարությունը իրականացնող մարմիններն են.

- ՀՀ պետական կառավարման մարմինները, ի դեմս տեղեկատվության և հանրային

կապերի ստորաբաժանումների,

- Հանրային հաղորդակցության ոլորտի պատասխանատու պետական գերատեսչություններում քաղաքականություն մշակող ստորաբաժանումները (ԿԳՄՄՆ, Արդարադատության նախարարություն, ԱԺ, ԱԳՆ, ՀՀ նախագահի աշխատակազմ և այլն)
- ՁԼՄ, մեդիա ոլորտի ներկայացուցիչներ
- Հաղորդակցության ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններ:

Ռազմավարությանը օժանդակող մարմիներն են.

- Հաղորդակցության ոլորտում գործունեություն ծավալող միջազգային կազմակերպություններ և տարածաշրջանային միավորումներ,
- Տեղական և արտասահմանյան կառույցներ, դոնոր կազմակերպություններ:

1.2 Բարելավել պետական կառույցների պրոակտիվ հրապարակայնությունը

Ապատեղեկատվության դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու նպատակով նախատեսվում է բարելավել կառավարման համակարգում պրոակտիվ հրապարակայնության մակարդակը[10]: Պրոակտիվ հրապարակայնության էությունն այն է, որ պետական մարմինները սեփական նախաձեռնությամբ հրապարակում են իրենց գործունեությանն առնչվող տեղեկատվություն՝ մատչելիության, արդիականության և ամբողջականության, օբյեկտիվության սկզբունքների հիման վրա:

Պետական գերատեսչությունները պետք է ձեռնարկեն հավակնոտ միջոցառումներ հանրային հետաքրքրության պաշտոնական փաստաթղթերը լիարժեք հանրայնացնելու ուղղությամբ ինչպես իրենց նախաձեռնությամբ, այնպես էլ հարցման հիման վրա, որպեսզի նպաստեն բաց և արդյունավետ կառավարմանը և կանխեն կեղծ տեղեկությունների ի հայտ գալը:

Այս նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները.

1.2.2 Պաշտոնական կայքերի միասնական ստանդարտների մոտարկում

Անհրաժեշտ է մշակել պաշտոնական կայքերի ստեղծման և մշակման ընդհանուր միասնական և արդիական ստանդարտ, ինչպես նաև կայքերի ձևավորման տիպային օրինակ՝ հաշվի առնելով առանձին ոլորտների առանձնահատկությունները: Անհրաժեշտության դեպքում նաև վերանայել գոյություն ունեցող օրենսդրական կարգավորումները և համապատասխանեցնել ժամանակակից միտումներին:

Պաշտոնական կայքերի կառուցվածքի և ձևավորման միասնականությունը հեշտացնում է քաղաքացու կողմից տեղեկատվության որոնումը, արդյունավետ դարձնում քաղաքացի-

[10] Տե՛ս ԻԱԿ «Տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում» Հետազոտություն http://www.foi.am/u_files/file/DOCs%202022

կառավարություն առցանց շփումը, հետևաբար և նվազեցնում ապատեղեկատության հոսքերը:

Անհրաժեշտ է նաև համապատասխան փոփոխություններ կատարել պաշտոնական կայքերի ստանդարտացման մասին իրավական կարգավորումներում, որոնք կլինեն գործուն, կիրառելի և կբխեն տեխնոլոգիաների զարգացման արդի պահանջներից:

1.2.3 Պաշտոնական կայքերի չափանիշները

Անհրաժեշտ է մշակել կայքերին ներկայացվող միասնական չափանիշներ: Ապահովել, որ պաշտոնական կայքերը հարմարեցվեն հաշմանդամություն ունեցող մարդկանց կարիքներին: Դրանցում ժամանակին և լիարժեք կհրապարակվեն օրենսդրությամբ սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները և դրանցում կատարվող փոփոխությունները: Պաշտոնական կայքերում տեղեկությունները կհրապարակվեն բաց տվյալների ձևաչափով՝ հասանելի և մատչելի յուրաքանչյուրին:

1.3 Ներդնել պետական կառույցների թափանցիկության և հաշվետվողականության գնահատման համակարգ

Պետական կառույցների թափանցիկության և հաշվետվողականության անհրաժեշտ մակարդակի ապահովման նպատակով [11] անհրաժեշտ է մեծացնել տեղեկատվության ազատության օրենսդրության նկատմամբ վերահսկողության ազդեցությունը՝ ներդնելով մարմինների գնահատման համակարգ: Տեղեկատվություն ստանալու հարցումներին պատասխանելու պրակտիկան և պրոակտիվ հրապարակայնության ապահովումը պետք է ենթարկվեն պարբերական գնահատումների՝ առկա բացերն ու խնդիրները վեր հանելու և ժամանակին կառավարելու նպատակով:

Տեղեկատվության ազատության և հրապարակայնության գնահատման համակարգը մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել բացություն ըստ դիզայնի (openness by design) մոտեցումը [12], որի նպատակն է խրախուսել տեղեկություն տնօրինողներին՝ գործել օրենքին համապատասխան սեփական նախաձեռնությամբ: Այս մոտեցումն ուղղակիորեն համադրելի է ռազմավարության պրոակտիվ հրապարակայնության ապահովման ուղղության հետ:

Տեղեկատվության ազատության և հրապարակայնության գնահատման համակարգը բաղկացած է երկու հիմնական ենթահամակարգերից.

- **արտաքին գնահատում** - այս բաղադրիչը բացահայտում է ՏԱ ոլորտի ընդհանուր գնահատման տեսլականը՝ ինչպես, որ մարմնի կողմից, ինչ պարբերականությամբ և ինչ չափանիշների հիման վրա է իրականացվելու ՏԱ ընդհանուր գնահատումը:

[11] Տե՛ս ԻԱԿ «Տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում» Հետազոտություն http://www.foi.am/u_files/file/DOCs%202022

[12] Տե՛ս Information Commissioner's Office, Openness by design: The Information Commissioner's strategic plan 2019/20 – 2021/22, https://ico.org.uk/media/about-the-ico/documents/2615190/openness_by_-design_strategy_201906.pdf, էջ 4:

- **ինքնագնահատում (ներքին գնահատում)** - այս բաղադրիչը ներառում է տեղեկություն տնօրինողի կողմից ինքնագնահատման մեթոդոլոգիան, այն չափանիշները, որոնք պետք է հաշվի առնվեն տեղեկություն տնօրինողի կողմից, ինչպես նաև խորհրդատվական ցուցումներ ՏԱ այն հիմնական գործառույթների վերաբերյալ, որոնք տեղեկություն տնօրինողը պարտավոր է իրականացնել ՏԱ ինքնագնահատումն իրականացնելուց առաջ:

Գնահատման հիմնական նպատակն է ձևավորել տվյալ մարմնում հրապարակայնության ու տեղեկատվության ազատության առկա վիճակի վերաբերյալ արժանահավատ տվյալներ, վեր հանել պրակտիկայի և օրենսդրության կիրառման ոլորտում առկա խնդիրները, ահազանգել դրանց մասին՝ հնարավորություն տալով իրավասու մարմիններին և քաղաքացիական հասարակությանը հետևողական լինելու այդ խնդիրների ժամանակին և արագ լուծմանը:

Գնահատման/ինքնագնահատման ենթակա են հետևյալ հարցերը.

- ✓ Տեղեկատվության ազատության ռեակտիվ ապահովումը. ՏԱ հարցումներին պատասխանելը,
- ✓ Տեղեկություն ստանալու մերժման հիմքերը և կարգի ապահովումը,
- ✓ Տեղեկատվության ազատության պրոակտիվ ապահովումը,
- ✓ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ինստիտուտը,
- ✓ ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարումը,
- ✓ Տեղեկություն ստանալու հարցումների պաշտոնական վիճակագրության ձևավորման աղբյուրները,
- ✓ Տեղեկություն ստանալու իրավունքի խախտումների բողոքարկման արդյունավետությունը,
- ✓ Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը:

Ինքնագնահատումը պետք է իրականացվի առնվազն տարին մեկ անգամ:

Ինքնագնահատումը պետք է իրականացվի մշակված տեղեկություն տնօրինողի կողմից՝ տեղեկատվության ազատության ինքնագնահատման հարցաշարի և մեթոդաբանության հիման վրա:

Ինքնագնահատման հարցաշարը ներառում է տեղեկություն ստանալու հարցումներին ընթացք տալու, մերժման հիմքերի, մատչելիության պրոակտիվ ապահովման, ՏԱ պատասխանատուի, ՏԱ վիճակագրության վարման, հրապարակման, վիճակագրության ձևավորման աղբյուրների և էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի վերաբերյալ 80 հարց-չափանիշ և յուրաքանչյուր հարցի հնարավոր պատասխանների տարբերակներ: Հարց-չափորոշիչները վերաբերում են, ՏԱ ռեակտիվ ապահովմանը (հարցումներին ընթացք տալու պրակտիկային), մերժումներին և մերժման հիմքերին, պրոակտիվ հրապարակայնության ապավոման մեխանիզմներին, ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ինստիտուտին, ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարմանը և վիճակագրության վարման աղբյուրներին, ինչպես նաև էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի օգտագործմանը:

Ինքնագնահատման համակարգի շնորհիվ ձեռք բերված արդյունքները պետք է համադրվեն արտաքին գնահատման արդյունքների հետ: Գնահատման արդյունքում պետական կառավարման մարմինները կինդեքսավորվեն՝ ըստ իրենց կառույցում հրապարակայնության մակարդակի:

Ուղղություն 2-րդ: Փոխգործակցության բարելավում և մասնավոր հատվածի մոբիլիզացիա

Ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես կախված է շահառուների գործակցությունից, միասնական սկզբունքների ամրագրումից և դրանց հետևողականության համակարգային վերահսկողությունից: Պետական մարմինների, տեղեկատվության և իրավական ոլորտներում գործունություն ծավալող կազմակերպությունների, լրագրողների և ոլորտի փորձագետների չհամակարգված, և չհամաձայնեցված վարքագիծը կարող է հանգեցնել թե՛ համապատասխան օրենսդրության չկիրառմանը, թե՛ կրթական ծրագրերի արդյունավետության նվազմանը:

Այսպիսով՝ **փոխգործակցության ուղղության գլխավոր նպատակը ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարության իրականացման ընթացքում արդյունավետ փոխգործակցության ապահովումն է շահառու բոլոր խմբերի և անհատների հետ:**

Այս ուղղության ենթանպատակներն են.

- Ձևավորել համագործակցության ձևաչափ ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային ռազմավարության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպությունների, մարմինների, անհատների հետ, ներառյալ մասնավոր հատվածը,
- Սահմանել փոխգործակցության ուղղություններն ու վեր հանել հնարավորությունները,
- Ստեղծել փոխգործակցության համար անհրաժեշտ մեխանիզմներ:

Ապատեղեկատվության դեմ պայքարը պահանջում է բոլոր սոցիալական դերակատարների և շահագրգիռ կողմերի համագործակցությունը, բիզնեսից, լրատվամիջոցներից և քաղաքական կուսակցություններից մինչև կրթական հաստատություններ և հասարակական կազմակերպություններ:

Սույն ռազմավարության շրջանակներում առաջարկվում են ապատեղեկատվության դեմ պայքարի շրջանակում փոխգործակցության հետևյալ մեխանիզմներն ու ուղղությունները.

2.1 Աշխատանքային խմբի ստեղծում

Փոխգործակցող մարմինների համապատասխան մանագետների (Տեղեկատվության և հանրային կապերիստորաբաժանման ղեկավարներ, խմբագիրներ, լրագրողներ, հանրային կապերի մասնագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ) կողմից աշխատանքային խմբի ստեղծում՝ «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի համակարգմամբ: Աշխատանքային խմբում կներառվեն նաև շահագրգիռ պետական գերատեսչությունների ներկայացուցիչները ի դեմս՝ ԱԳՆ-ի, ԿԳՄՍՆ-ի, ԱՆ-ի, ԿՁՆԱԿ-ի, ՄԻՊ-ի, ՊՆ-ի և այլնի, ինչպես նաև հաղորդակցության ոլորտում գործունեություն իրականացնող մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

Աշխատանքային խմբի նպատակներն են.

- Ապատեղեկատվության դեմ ազգային ռազմավարության քննարկում և վերջնականացում,
- Ռազմավարության գործողությունների պլանի մշակում,
- Ռազմավարության իրականացման նպատակով դերերի արդյունավետ բաշխում,
- Ռազմավարության իրականացման մշտադիտարկում,
- ապատեղեկատվության դեմ պայքարի նոր գործիքների և հարթակների ստեղծում, որտեղ ներգրավված կլինեն մի քանի մարմիններ,
- առկա ռեսուրսների բաշխում և անհրաժեշտության դեպքում՝ ֆոնդահայթայթում,
- հանրային իրազեկման նպատակով սեփական հարթակների կիրառում:

Աշխատանքային խմբի գործունեությանը վերաբերող մանրամասները (հանդիպումների հաճախակիություն, վայր, օրակարգ, գործողությունների հաջորդականություն) պետք է քննարկվեն աշխատանքայի խմբի առաջին նիստի ժամանակ: Աշխատանքային խմբի ստեղծումը նախաձեռնում է «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ը, ոլորտի կազմակերպություններին և այլ շահառուների աշխատանքային խմբի ստեղծման մասին իրազեկմամբ:

Ապատեկատվության դեմ պայքարը պահանջում է արագ արձագանքման մեխանիզմների ներդրում, ինչպես առանձին գերատեսչությունների, այնպես էլ համակարգային մակարդակով: Այս առումով առցանց հաղորդակցության հարթակի ստեղծումը հնարավորություն կտա վերջին թարմացումների վերաբերյալ իրազեկել գործընկերներին, իսկ անհրաժեշտության դեպքում ապահովել արագ համախմբումն ու արձագանքը:

Առցանց հաղորդակցության հարթակի ընտրությունը պետք է կատարվի աշխատանքային խմբի կողմից և ընդգրկի թե՛ աշխատանքային խմբի անդամներին, թե՛ ոլորտի այլ շահառուների և պատասխանատուների:

Միջազգային հարթակներում պետության, հանրության կամ ազգի դեմ տարածվող ապատեղեկատվության դեմ պայքարի շրջանակներում ՀՀ տարածքից դուրս իրականացվող միջոցառումների կազմակերպչական գործառույթները պետք է ստանձնի ՀՀ արտաքին գործերի նախարարությունը՝ ՀՀ պետական այլ կառույցների հետ համագործակցությամբ: Պատմական զեղծարարությունների, հակագիտական թեզերի կիրառման միջոցով ապատեղեկատվության տարածման պարագայում անհրաժեշտ է նաև ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի համապատասխան մասնագետների ներգրավման ապահովումը:

2.2 Փոխգործակցություն փաստեր ստուգող հարթակների հետ

Անկախ փաստերի ստուգման հարթակների հետ կձևավորվի ակտիվ համագործակցության շրջանակ: Կկազմակերպվեն քննարկումներ ոլորտի արդի զարգացումները և միտումները քննարկելու և տեղեկատվություն փոխանակելու նպատակով:

Կառավարությունը կհամագործակցի նաև այս հարթակների հետ ամբողջական ու ժամանակին տվյալներ տրամադրելու միջոցով, որպեսզի փաստեր ստուգող հարթակները կարողանան լիարժեք կատարել իրենց գործառույթը:

Համագործակցային ձևաչափերն հատկապես ակտիվորեն կկիրառվեն նախընտրական փուլերում քաղաքական ապատեղեկատվության հոսքերը նվազեցնելու նպատակով:

2.3 Փոխգործակցություն մեդիայի համակարգավորման և ինքնակարգավորման խթանման նպատակով

Ապատեղեկատվության դեմ պայքարի օրակարգը ներառում է նաև լրատվամիջոցների իրական շահառուների և ֆինանսավորման թափանցիկության ապահովումը, ինչպես նաև լրատվամիջոցների ինքնակարգավորման և համակարգավորման [13] մեխանիզմների խթանումը և հզորացումը:

Լրատվամիջոցների իրական շահառուների թափանցիկության ապահովման կարգավորումներն ուժի մեջ են 2021թվականից, և սույն ռազմավարության շրջանակում հիմնական առանցքը ԻԾ թափանցիկությունն ապահովող իրավական դրույթների լիարժեք կյանքի կոչելն է: Հանրությանը հասանելի և մատչելի պետք է լինեն մեդիաների իրական շահառուների տվյալները հանրային բաց ռեգիստրի միջոցով:

Ապատեղեկատվության դեմ պայքարում էական նշանակություն ունեն ինքնակարգավորման և համակարգավորման մեխանիզմները: Վերջին շրջանում Եվրախորհրդի կողմից հրապարակված փաստաթղթերում հստակ շեշտադրվում է՝ որ անդամ պետությունները պարտավորություններ են կրում ինքնակարգավորման հետ կապված՝ ապահովելով ինքնակարգավորման և համակարգավորման մեխանիզմների համապատասխան ֆինանսավորում և իրավական աջակցություն՝ անկախությունն ու ֆինանսական կայությունն ապահովելու համար:[14]

Ինքնակարգավորման աջակցության ուղղությամբ արդեն իսկ որոշակի աշխատանք կատարվել է: Մասնավորապես՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում 2020թ. արված փոփոխությունների համաձայն՝ մասնագիտական էթիկայի կանոնագիրը և ինքնակարգավորման մեխանիզմները պարտադիր են դարձել լիցենզավորող մրցույթներին մասնակցող հեռարձակող մեդիայի համար, թեև այդ միջոցների կիրառման պրակտիկան դեռևս բավարար չէ: Նախատեսվում է շարունակել ընդհանուր բարենպաստ միջավայրի ձևավորումը և ինքնակարգավորման մեխանիզմների պոտենցիալ դերի մասին հանրային իրազեկվածության բավարար մակարդակի ապահովումը, ինչպիսիք են՝ Էթիկայի դիտորդ

[13] Համակարգավորումը ներառում է մեդիա կարգավորող մեխանիզմները և ինքնակարգավորման գործիքները: Այն առավել ներառական է, քանի որ գործընթացում ներգրավվում են ինչպես պետությունը, կարգավորող մարմինները, այնպես էլ մեդիաները, ՔՀԿ-ները և քաղաքացիները:

[14] Տե՛ս Council of Europe, Declaration Decl(13/02/2019)2 by the Committee of Ministers on the financial sustainability of quality journalism in the digital age, https://search.coe.int/cm/pages/result_details.aspx?objectid=090000168092dd4d:

մարմինը [15] և Տեղեկատվական վեճերի խորհուրդը [16], որոնք կարող են բարձրացնել լրատվամիջոցների հանձնառությունը բովանդակության որակի վերահսկման նկատմամբ:

Ինքնակարգավորման խթանման ուղղությամբ կառավարության գործունեության հիմնական ուղղությունները ներկայացված են 2022թ.-ին մշակված Ինքնակարգավորման զարգացման հայեցակարգում: Առաջնային է ինքնակարգավորման ձևավորված մեխանիզմներին մեդիաների անդամակցության և գործընթացում ակտիվ ներգրավման հարցը:

Միաժամանակ կարգավորումներ կսահմանվեն Հանրային հեռուստատեսության և ռադիոյի կողմից էթիկայի վարքականոններ մշակելու և ընդունելու նպատակով:

Կարգավորող անկախ մարմնի (Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի) լիազորությունների շրջանակը կընդլայնվի՝ ընդգրկելով նաև մեդիագրագիտության զարգացման պարտադիր բաղադրիչը:

Կարգավորող մարմինը կապահովի հանրային իրազեկվածության բարձրացում մեդիաների դերի և առաքելության, կարգավորման և ինքնակարգավորման մարմինների դերի և գործառույթների, ինչպես նաև մեդիաների իրական շահառուների թափանցիկության կարևորության և կարգավորումների վերաբերյալ:

2.4 Մասնավոր հատվածի ներգրավում և մոբիլիզացիա

Ապատեղեկատվության դեմ պայքարում առանցքային է նաև մասնավոր հատվածի դերը: Տեղեկատվական տեխնոլոգիական, հաղորդակցության, հանրային կապերի, խորհրդատվական ոլորտում ներգրավված մասնավոր ընկերությունները կարող են ստանձնել ապատեղեկատվության դեմ պայքարի մեխանիզմների և նորարարական գործիքների մշակման դերը ինչպես կառավարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության հետ ակտիվ համագործակցությամբ:

Սոցիալական հարթակները, որոնողական համակարգերն ու առցանց գովազդը մեծապես օգտագործվում են ապատեղեկատվության տարածման գործում: Նորագույն տեխնոլոգիաները կարող են ինչպես նպաստել ապատեղեկատվության տարածմանը, այնպես էլ դրանց դեմ պայքարի կարևոր գործիք դառնալ: Արդեն իսկ գոյություն ունեն արհեստական բանականության և մեքենայական ուսուցման վրա հիմնված ծրագրեր, (օր.՝ PHEME, WeVerify, InVID, ChekDesk, Veri.ly, Citizen Des, Emergent)[17], որոնք չնայած հետագա զարգացման կարիք ունեն, այս ոլորտում կարող են առաջին արդյունավետ քայլերը համարվել:

[15] Տե՛ս www.ypc.am:
[16] Տե՛ս www.idcarmenia.am:
[17] Տե՛ս EPRS | European Parliamentary Research Service, Automated tackling of disinformation, 2019, https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2019/624278/EPRS_STU(2019)624278_EN.pdf :

Մասնավոր ընկերություններն հատկապես կարևոր դերակատարում կարող են ունենալ ապատեղեկատվության դեմ ավտոմատացված պայքարի մեխանիզմների և արհեստական բանականության միջոցով արդյունավետ գործիքների մշակման հարցում: Պետական ֆինանսավորման կամ միջազգային կազմակերպություններից տրվող դրամաշնորհների առկայությունը տեխնոլոգիական մասնավոր ընկերությունների համար արդյունավետ ծրագրերի ստեղծման խթան կարող է դառնալ:

Անհրաժեշտ է ձևավորել պետության և սոցիալական հարթակների միջև համագործակցություն՝ ստեղծելով ուղիղ երկխոսության խողովակներ՝ սոցիալական հարթակների ալգորիթմների թափանցիկության, այս հարթակներում տեղադրվող գովազդի և հովանավորված բովանդակության (sponsored content), բովանդակության մոդերացիայի, կեղծ հաշիվների հիմնախնդիրների, սոցիալական պատասխանատվության շրջանակի, անձնական տվյալների պաշտպանության, անաչառության և բազմազանության ապահովման և այլ կենսական հարցերի շուրջ անմիջական երկխոսություն ծավալելու նպատակով: Երկխոսությունը նաև կնպաստի սոցիալական հարթակներում համակարգավորման մեխանիզմներ ներդնել: Այս քայլերը հնարավորություն կտան պայքարել սոցիալական հարթակներում ապատեղեկատվության լայնամասշտաբ ալիքների դեպքում:

Մասնավոր հատվածը սոցիալական պատասխանատվության շրջանակներում պետք է ակտիվորեն ներգրավվի ապատեղեկատվության դեմ պայքարի գործընթացներում:

Ապատեղեկատվության դեմ պայքարում անհրաժեշտ է կարևորել մասնավոր հատվածի թափանցիկության ու հաշվետվողականության բարելավումը որպես հանրային վստահության և երկրի տնտեսական համակարգի անվտանգության երաշխիք: Թափանցիկության և հաշվետվողականության բարելավման պահանջն առաջին հերթին անհրաժեշտ է տարածել հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների, խոշոր կազմակերպությունների, ինչպես նաև հանրային սպասումներ ձևավորող կազմակերպությունների (օրինակ՝ խորհրդատվական, աուդիտորական կազմակերպություններ, ռեյտինգային/ռենկինգային գործակալություններ և այլն) վրա:

Ուղղություն 3-րդ: Բարձրացնել մեդիաազատությունների վերաբերյալ գիտելիքի և մեդիակրթության մակարդակը՝ ձևավորելով ապատեղեկատվության հանդեպ հանրային դիմակայություն

Ապատեղեկատվության դեմ պայքարում լրագրողական համայնքի ջանքերի, փաստերի ստուգման մասնագիտական նախաձեռնությունների արդյունավետությունը մեծապես կախված է հասարակության մեդիագրագիտության մակարդակից. որքանով են մարդիկ ընկալում ժողովրդավարության ու խոսքի ազատության իմաստն ու նպատակը, հասկանում մեդիայի աշխատանքը, դրա ազդեցության մեխանիզմները, տարբերում կասկածելի ու վստահելի տեղեկությունները, աղբյուրները, կարողանու՞մ են ստուգել տեղեկությունները, կառավարել իրենց առցանց վարքը, զգացմունքներն ու արձագանքները՝ կասկածելի, կեղծ, մոլորեցնող տեղեկությունների հանդիպելիս, պաշտպանվա՞ծ են տեղեկատվական ու գրոհներից ու օնլայն խաբեություններից:

Աշխարհում ինտերնետ օգտատերերի 57%-ը կեղծ լուրերը մտահոգիչ է համարում[18]:

Հայաստանում մարդկանց 48%-ն ամեն օր հանդիպում է ապատեղեկատվության և մոլորեցնող լուրերի, իսկ հանրության 80%-ը ոչ մի քայլ չի ձեռնարկում կասկածելի տեղեկության հանդիպելիս [19] : Մարդիկ կարիք ունեն ավելի լավ հասկանալու տեղեկատվական միջավայրը, նաև զինվելու կասկածելի տեղեկությունները ճանաչելու և ստուգելու հմտություններով:

Եվրոպական խորհրդարանի Աուդիովիզուալ մեդիայի մասին սահմանում է, որ մեդիագրագիտությունը մեդիան արդյունավետ և ապահով կիրառելու հմտությունների, գիտելիքի ու ընկալումների ամբողջությունն է. քաղաքացիները պիտի կարողանան հասանելիություն ունենալ տեղեկատվությանը, քննադատորեն վերլուծել այն, ստեղծել մեդիաբովանդակություն: Փաստաթուղթը նաև շեշտում է, որ տեխնոլոգիական կրթությունից բացի շատ կարևոր է քննադատական մտածողության դերը՝ դատողություններ անելու, բարդ իրականությունը վերլուծելու, կարծիքն ու փաստը տարբերելու համար[20] :

Այս մոտեցումները հիմք ընդունելով՝ եվրոպական շատ երկրներ ներառել են մեդիագրագիտության կարողությունների զարգացումը կրթական համակարգում՝ առաջնորդվելով նաև մոտեցմամբ, որ հենց պետության պարտավարությունն է մշակել ռազմավարություն ու ծրագրեր և ապահովել քաղաքացիների մեդիակրթությունը[21] :

Դասավանդման մոտեցումները տարբեր են եվրոպական երկրներում՝ տարրալուծել գործընթացը տարբեր առարկաների ծրագրերում, առաջարկել առանձին թիրախային դպրոցական առարկաներ (մեդիագրագիտության, մեդիա արտադրություն, ֆիլմի գրագիտություն) կամ կարճ 2-3-ամիս տևողությամբ մոդուլներ, դարձնել

---

[18] Տե՛ս Lloyds Register Foundation, World Risk Poll (Powered by Gallup), 2020, https://tinyurl.com/mksecjb6:

[19] Տե՛ս Մեդիա նախաձեռնությունների կենտրոն և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն –Հայաստան, Մեդիա սպառումը Հայաստանում, 2022, https://media.am/hy/lab/2022/01/26/31473/:

[20] Տե՛ս Directive (EU) 2018/1808 of the European Parliament and of the Council of 14 November 2018 amending Directive 2010/13/EU (Audiovisual Media Services Directive), article 59, https://eur-lex.europa.eu/eli/dir/2018/1808/oj:

[21] Տե՛ս Directive (EU) 2018/1808 of the European Parliament and of the Council of 14 November 2018 amending Directive 2010/13/EU (Audiovisual Media Services Directive), article 33, https://eur-lex.europa.eu/eli/dir/2018/1808/oj:

մեդիագրագիտությունը խորացված ուսումնական ուղղություն ավագ դպրոցում, ստեղծել խմբակներ կամ ակումբներ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն միջազգային առաջատարն է մեդիա և տեղեկատվական գրագիտության տարածման, ուղեցույցների մշակման հարցում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի նոր ուղեցույցը[22] շեշտում է, որ մեդիա և տեղեկատվական գրագիտությունը հանրակրթության մեջ ինտեգրելուն զուգահեռ պետք է նաև

- ստեղծվեն ոչ ֆորմալ կրթության հնարավորություններ (առցանց ռեսուրսներ, դասընթացներ)
- համայնքային նախաձեռնություններ (խմբակներ, գրադարաններ)
- մասնագիտական վերապատրաստումներ (քաղաքականություն մշակողներ, պաշտոնյաներ, լրագրողներ, առողջապահության ոլորտի աշխատողներ, քաղհասարակություն և այլք):

Մեդիագրագիտության տարածման աշխատանքը համակարգելու համար շատ երկրներում պատասխանատու մարմիններ են ստեղծվում կառավարությանը, կրթության նախարարությանը կից: Ֆինլանդիայում, օրինակ, Ազգային մեդակրթության և աուդիովիզուալ մեդիայի ինստիտուտը գործել է դեռ 1940-ականներից, որի հիմքի վրա էլ ձևավորվել է այսօր մեդիագրագիտությունը կարգավորող կառույցը՝ KAVI-ն (Ազգային աուդիովիզուալ ինստիտուտը)[23]՝ Կրթության նախարարությանը կից: Այս կառույցը նաև հետևում է մեդիայի աշխատանքին և համապատասխան օրենսդրության պահպանությանը լրատվամիջոցներում՝ երեխաների իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Շվեդիայում գործող Մեդիա խորհուրդը նման գործառույթներ ունի. տարածում է մեդիակրթություն, հետևում է մեդիայի աշխատանքին, դասակարգում է մեդիայի արտադրանքը՝ տարիքային բաժանումներով ու համապատասխան նշումներով[24], նաև համակարգում է մեդիագրագիտությամբ զբաղվող այլ կառույցների ու կազմակերպությունների ցանցի աշխատանքը:

Իսկ Մեծ Բրիտանիայում, օրինակ՝ մեդիագրագիտության պատասխանատուն Ofcom-ն է՝ մեդիա դաշտը կարգավորող անկախ մարմինը, որը սերտորեն համագործակցում է կառավարության հետ և հետևում մեդիագրագիտության ռազմավարությանը[25]:

Մեդիագրագիտության տարածման միջազգային լավագույն փորձը հուշում է նաև, որ այս գործընթացը պիտի հիմնված լինի խորը հետազոտությունների ու տվյալների վրա, ունենա

---

[22] Տե՛ս UNESCO, Global Standards for Media and Information Literacy Curricula Development Guidelines, էջ 30, 2022, https://www.unesco.org/sites/default/files/medias/files/2022/02/Global%20Standards%20for%20Media%20and%20Information%20Literacy%20Curricula%20Development%20Guidelines_EN.pdf:

[23] Տե՛ս Ազգային աուդիովիզուալ ինստիտուտ, Ֆինլանդիա, https://kavi.fi/:

[24] Տե՛ս Շվեդիայի Մեդիա խորհուրդ, https://www.statensmedierad.se/:

[25] Տե՛ս Department for Digital, Culture, Media and Sport, UK, Online Media Literacy Strategy, 2021, https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/1004233/DCMS_Media_Literacy_Report_Roll_Out_Accessible_PDF.pdf:

մանրամասն մշակված ռազմավարություն և գործողությունների ծրագիր, լինի համընդգրկուն, համակարգային և շարունակական[26]:

3.1 Աշխատանք՝ մեդիագրագիտությունը հանրակրթության մեջ ներառելու ուղղությամբ

Մեդիակրթությունը ինստիտուցիոնալիզացնելու նպատակով կազմակերպություններն աշխատում են ԿԳՄՍ նախարարության, բուհերի, ուսումնական հաստատությունների հետ:

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը 2011 թվականից սկսած անցկացնում է ուսուցիչների և դասընթացավարների վերապատրաստումներ՝ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված «Մեդիագրագիտություն» առաջին հայերեն ուսումնական ձեռնարկի նյութերով[27]: 2017թ.-ին ՄՆԿ-ի և նախարարության միջև կնքված հուշագրում, ըստ էության, առաջին անգամ պետությունը կարևորեց մեդիագրագիտության ինտեգրումը դպրոցում ու պարտավորություն ստանձնեց՝ աջակցել այդ գործին:

Հանրային լրագրության ակումբը վերջին երկու տարիներին ակտիվորեն աջակցում է մեդիագրագիտությունը նախադպրոցական կրթության մեջ ներառելու ջանքերին՝ վերապատրաստելով մանկավարժներին, մշակելով ու տեղայնացնելով ուսումնական նյութեր և առաջարկներ:

Թվային գրագիտության ուղղությամբ դպրոցների հետ ակտիվ համագործակցում է Մեդիակրթության կենտրոնը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը զարգացնում է պատանիների՝ փաստերը ստուգելու կարողությունները՝ փաստերի ստուգման լաբորատորիաներ ստեղծելով բուհերում ու դպրոցներում: Միաժամանակ պարբերաբար կազմակերպում փաստերի տսուգման վերապատարստման դասընթացներ հանրային և համայնքային ծառայողների, ինչպես նաև բիզնեսի ներկայացուցչիների համար[28]:

Վերջին մի քանի տարիներին Հայաստանում պետական աջակցությամբ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից նշվում է Մեդիագրագիտության շաբաթը, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլոբալ նախաձեռնության տեղայնացումն է. հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբին անցկացվող շաբաթվան միանում են ՀՀ բոլոր դպրոցները, նաև շատ բուհեր, մանկապարտեզներ, կրթական ու մշակութային կենտրոններ ու կազմակերպություններ, լրատվամիջոցներ՝ դասընթացներ, միջոցառումներ և իրազեկման արշավներ կազմակերպելով:

---

[26] Տե՛ս Finnish Ministry of Education and Culture, Media Literacy in Finland: national media education policy, 2019, https://medialukutaitosuomessa.fi/mediaeducationpolicy.pdf:

[27] Տե՛ս Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, «Մեդիագրագիտություն» ուսումնամեթոդական ձեռնարկ, 2013, https://media.am/hy/lab/2020/04/16/17917/ :

[28] Տե՛ս, օրինակ, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, «Փաստերի ստուգումը պաշտոնյաների համար» դասընթացի ծրագիր, 2021 թ., https://tinyurl.com/3k6zk4dz:

Պետության հետ համագործակցությունը հատկապես ակտիվացել է 2018թ. հեղափոխությունից հետո. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը մեդիագրագիտությունը այն ներառել է կրթության մեծամասշտաբ բարեփոխումներում: 2022 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի աջակցությամբ ԱԳՆ-ն ՄՆԿ-ի հետ միասին մշակել և կրթական հաստատություններում տարածել է «Մեդիագրագետ քաղաքացու ուղեցույց»[29]:

3.2 Մեդիագրագիտության զարգացման ուղղությունները

2021թ. փետրվարին հաստատված ՀՀ հանրակրթության պետական չափորոշիչը [30] (նաև նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը) հիմնված է 8 կարողունակությունների վրա, որոնցից մեկը **թվային և մեդիա կարողունակությունն է,** որն, ըստ էության, մեդիագրագիտության մանրամասն նկարագրությունն է՝ ձևակերպված քաղհասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Թվային և մեդիա կարողունակություն. սովորողները տիրապետում են մեդիագրագիտության կանոններին ու հմտություններին. պատկերացնում են մեդիայի աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում, կարողանում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում, գտնել և տարածել տեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք, գնահատում են մեդիայի ազդեցությունը սեփական և այլոց արժեքային պատկերացումների, դիրքորոշումների և գործողությունների վրա:

Թվային մեդիայի օգտագործման հնարավորությունների կողքին գիտակցում են նաև դրանց հետ կապված ռիսկերը, ունակ են գնահատելու և վերափոխելու իրենց վարքը թվային աշխարհում՝ անվտանգության, պատասխանատվության և էթիկայի տեսանկյունից: Տիրապետում են մեդիա արտադրանք ստեղծելու տեխնիկական և ստեղծագործական հմտություններին, ինչպես նաև կարողանում են արդյունավետորեն կիրառել մեդիա գործիքները քաղաքացիական իրավունքների իրացման ու ժողովրդավարական գործընթացների մասնակցության նպատակով:

Նախադպրոցական և հանրակրթության պետական չափորոշիչները նոր կրթական ծրագրերի հիմքն են, դրանցով են առաջնորդվելու դրանք մշակողներն ու դասավանդողները:

Հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է հանրակրթության բոլոր մակարդակների համար (տարրական, հիմնական և միջնակարգ) պարտադիր ուսումնական վերջնարդյունքները, որոնց թվում են քննադատական մտածողության, մեդիա և թվային գրագիտության կարողությունների ձևավորումը:

Չափորոշիչը ուղեգծում է մեդիագրագիտության դասավանդման մոդելը՝ այն պիտի ինտեգրվի դպրոցական տարբեր առարկաների ծրագրերում և դասավանդման

[29] Տե՛ս Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, «Մեդիագրագետ քաղաքացու ուղեցույց», , 2022, https://media.am/hy/lab/2022/05/02/32646/:

[30] Տե՛ս Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին Կառավարության որոշում N136, 2021, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788:

մեթոդներում: Ըստ էության՝ սովորողը հասարակագիտության, թվային գրագիտության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, ինֆորմատիկայիպ և մյուս առարկաների ուսուցման միջոցով պիտի սովորի ստուգել աղբյուրները, վերլուծել տեղեկությունները, գործի դնել քննադատական մտածողությունը, ձևակերպել սեփական մտքերը, օգտագործել մեդիա գործիքները:

Նոր չափորոշիչով մշակված ծրագրերն այսօր փորձարկման փուլում են Տավուշի մարզում: 2021թ.-ին, ատեստավորման քննություններին ընդառաջ, անցկացվեցին նաև ուսուցիչների ինտենսիվ վերապատրաստումներ:

Մեդիագրագիտության զարգացման կարևոր ուղղություն է նաև գիտահետազոտական կապերի ամրապնդումը քաղաքականության վրա մեդիագրագիտության ազդեցության գնահատականներ տալու միջոցով: Այն հնարավոր կլինի միայն հայ գիտնականների, ոլորտի մասնագետների և միջազգային հեղինակություն ունեցող փորձագետների, գիտական հանրույթի հետ սերտ համագործակցության և փորձի փոխանակման միջոցով:

3.3 Անհրաժեշտ գործողություններ և լուծումներ

<u>Սույն Ռազմավարության հիման վրա նախատեսվում է մշակել Գործողությունների ծրագիր-ժամանակացույց՝ Կառավարության կողմից Ռազմավարության ընդունումից հետո եռամսյա ժամկետում:</u>

Առանձնացվել է հինգ ենթաուղղություն:

Ա. Գործողությունների ծրագրում մեդիագրագիտության բարձրացման ուղղված քայլերի հստակեցում, աշխատանքների համակարգում:

Այս ուղղության ապահովման նպատակով անհրաժեշտ է.

- Անցկանցել կարիքների գնահատման խորը ուսումնասիրություններ առաջին հերթին ուսուցիչների, ապա նաև սովորողների և լայն հանրության շրջանում:
- Հետազոտական տվյալների, հայաստանյան քաղհասարակության փորձի, միջազգային լավագույն փորձի հիման վրա ստեղծել մեդիագրագիտության տարածման հայեցակարգ, ապա նաև գործողությունների ծրագիր՝ համագործակցելով լրագրողական և կրթական համայնքի ակտիվ դերակատարների, ոլորտի կազմակերպությունների ու փորձագետների հետ:
- Ստեղծել կառավարությանը կից խորհուրդ, մարմին՝ համակարգելու աշխատանքն ու գործողությունները այնպես, որ մարմինը լինի հնարավորինս անկախ, կազմված լինի ոլորտի մասնագետներից:

Բ. Մեդիագրագիտության ինտեգրում հանրակրթության մեջ

Այս ուղղությամբ արված են քայլեր թե՛ հասարակական կազմակերպությունների, որոնք մշակել են ձեռնարկներ ու ծրագրեր, թե՛ պետության, որ ներառել է թվային և մեդիա կարողունակությունը պետական չափորոշչի մեջ:

- Ինտեգրման համար անհրաժեշտ է ընտրել մի քանի առարկա («Հայոց լեզու», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա»), որոնց շրջանակներում առանձին դասաժամերի ընթացքում անդրադարձ կկատարվի մեդիագրագիտության բաղադրիչին: Դիտարկել նաև մոդուլային ուսուցման հնարավորությունը՝ լրացուցիչ դասընթացի կամ խմբակի ձևաչափով
- Առաջարկել առանձին մեդիագրագիտություն կամընտրական առարկա՝ ավագ դպրոցում, որ կդառնա նաև մասնագիտական կողմնորոշման հնարավորություն աշակերտի համար:
- Ուսուցիչների նախաատեստացիոն վերապատրաստումների ծրագրում ներառել մեդիագրագիտությանը վերաբերող առանձին բաղադրիչ:
- Դիտարկել գրադարանը մեդիակրթության կենտրոն դարձնելու մոտեցումը՝ թվայնացնելով և տեխնիկապես զինելով գրադարանը, հարստացնելով այն համապատասխան գրականությամբ, խաղերով, առցանց ռեսուրսներով:
- Դպրոցների, մանկապարտեզների ու բուհերի համար մշակել որակյալ կրթական մեդիա նյութեր՝ ներառելով անիմացիոն նյութեր, բացատրական ֆիլմեր, հետազոտությունների ու փաստերի վրա հիմնված տեսաձայնային ու մուլտմեդիա նյութեր տարբեր առարկաների ու թեմաների վերաբերյալ՝ ըստ տարիքի մշակված:
- Մեդիագրագիտությունը ներառված է նաև նախադպրոցական կրթության չափորոշչում. անհրաժեշտ է նաև նախադպրոցական կրթության ծրագրերը վերանայել և մշակել նոր նյութեր:
- Բուհերն ավելի ինքնուրույն են կազմում իրենց ծրագրերը: Մեդիագրագիտության դասընթացներ ներառված են որոշ բուհերի մանկավարժության ու լրագրության բաժիններում, սակայն կարևոր է այդ առարկան՝ որպես կամընտրական առարկա հասանելի դարձնել բոլորին՝ անկախ մասնագիտացումից:

Գ. Ուսուցիչների վերապատրաստումներ

Մեդիագրագիտության դասավանդումը ոչ այնքան գիտելիքի, որքան արժեքների, ընկալումների, սկզբունքների մասին է: Այդ առումով շատ կարևոր է ուսուցիչների հետ երկարատև և հետևողական աշխատանքը: Քանի որ բոլոր ուսուցիչներին հնարավոր չէ արագ վերապատրաստել, կարևոր է սկսել այն առարկաների ուսուցիչներից, որոնցում ներդրվելու են մեդիագրագիտության թեմաները:

- Վերանայել և ավելացնել մեդիակրթության ծավալը մանկավարժական բուհական կրթության մեջ՝ համոզվելով, որ ապագա ուսուցիչը զարգացնում է և՛ մեդիա գործիքների կիրառության տեխնիկական հմտությունները, և՛ քննադատական մտածողությունը, և՛ հասկանում է մեդիայի, խոսքի ազատության արժեքը, ժամանակակից միտումներն ու խնդիրները:
- Ուսուցիչների (մասնավորապես հասարակագիտության ու լեզուների, ինֆորմատիկայի) համար անցկացնել վերապատրաստման դասընթացներ, ամառային դպրոցներ:
- Մեկտեղել մեդիագրագիտության մասին առցանց հայերեն ռեսուրսները, լրացնել դրանք ըստ անհրաժեշտության՝ դրանք հասանելի դարձնելով ուսուցիչներին

շարունակական կրթության համար: Այդպիսի նյութեր ունեն տարբեր հասարակական կազմակերպություններ, որոնց հետ համագործակցելով կարելի է ստեղծել արժեքավոր առցանց շտեմարան:
- Խրախուսել ներդպրոցական և միջդպրոցական փորձի փոխանակման, ուսուցչական աշխատաժողովները, դասի պլանների ու նախագծերի մրցույթները:
- Վերապատրաստման հնարավորություններ ստեղծել նաև ԲՈՒՀ-երի անձնակազմի և դասավանդողների համար:

Դ. Հանրակրթությունից դուրս մնացած խմբերի հետ աշխատանք

Ցկյանս շարունակական կրթությունն առհասարակ համակարգման կարիք ունի: Հանրակրթությունից դուրս մնացած խմբերի շրջանում մեդիագրագիտությունը խթանելու առումով հատկապես օգտակար կլինեն հետևյալ գործողությունները՝

- Համագործակցել լրատվամիջոցների, մասնավորապես՝ հանրային լրատվամիջոցների հետ՝ խրախուսելով մեդիագրագիտության կրթական հաղորդումների պատրաստումը՝ ինչպես նաև՝ լրագրողների ներգրավումը կրթական նախագծերում՝ նպաստելով, որ լրատվամիջոցների աշխատանքը դառնա ավելի թափանցիկ ու բաց քաղաքացիների համար, աջակցելով փաստերի ստուգմանը, մասնագիտական թիմերի ձևավորմանն ու աշխատանքին:
- Ավելացնել քաղաքական, սոցիալական, առողջապահական և այլ կարևոր թեմաներով բացատրական, կրթական, ճանաչողական որակյալ բովանդակությունը հանրային լրատվամիջոցներում, որոնք կօգնեն մարդկանց փաստահեն, ստուգված, վստահելի տեղեկություններ ստանալ:
- Համագործակցել գրադարանների, թանգարանների, մշակույթի կենտրոնների, նաև՝ ոչ ֆորմալ կրթությամբ զբաղվող հասարակական կազակերպությունների հետ մեդիակրթության զարգացման գործում (աշխատակիցների ու դասավանդողների վերապատրաստումներ, նոր ծրագրեր, դրամաշնորհներ, տեխնիկական վերազինում):
- Մեդիագրագիտության վերաբերյալ ոչ ֆորմալ և լրացուցիչ կրթական ծրագրերի փորձաքննության իրականացում, հաստատված ծրագրերի հրապարակում:
- Շարունակական և հետևողական վերապատրաստումներ կազմակերպել պետական համակարգի աշխատակիցների, մասնավորապես՝ տեղեկատվության պատասխանատուների համար:
- Առանձնահատուկ ուշադրություն դարձնել նաև ծնողներին. ծնողները թե՛ իրենց, թե՛ առավել ևս երեխաների մեդիա օգտագործումը համակարգելու հարցում աջակցության ու կրթության մեծ կարիք ունեն, սակայն նրանք հազվադեպ են հայտնվում կրթական ծրագրերի մեջ: Մանկապարտեզը, դպրոցը, գրադարանը և մյուս կրթական հաստատությունները պետք է ներառեն նաև ծնողներին՝ մեդիագրագիտության վերաբերյալ ծրագրերում ու քննարկումներում:
- Մեծահասակների համար (30-65 տարեկաններ) հասանելի առցանց կրթական ռեսուրսների ստեղծում, որը մեկտեղում է տարբեր կազմակերպությունների մշակած կրթական ռեսուրսները:

Ե. Հանրային և համայնքային ծառայողների վերապատրաստում և կարողությունների զարգացում

Մեդիագրագիտության խորը և հետևողական վերապատրաստումների կարիք կա պետական կառավարման և ՏԻՄ համակարգում հանրային կապերի և հաղորդակցության ոլորտների աշխատակիցների համար՝ հզորացնելու հանրային(այդ թվում՝ համայնքային) ծառայողների կարողությունները՝ փաստերի ստուգման և ապատեղեկատվության դեմ պայքարի գործիքների հարցում:

Վերապատարստումների ծրագրերը կներառվեն հանրային(այդ թվում՝ համայնքային) ծառայողների ընդհանուր, պարտադիր վերապատրաստման ծրագրերում և կիրականացվեն պարբերաբար՝ կարիքների գնահատման արդյունքների հիման վրա:

Կմշակվեն և կիրապարակվեն կրթական և կիրառական ռեսուրսներ՝ ապատեղեկատվության դեմ պայքարի գործնական խորհուրդներով և հմտություններով՝ որպես ամենօրյա աշխատանքային գործիքներ: Ուղեցույցը կամ ձեռնարկը կտրամադրի պարզ և գործնական խորհուրդներ, թե ինչպես պետք է պաշտոնյաները կարողանան ճանաչել, բացահայտել և հակադարձել ապատեղեկատվությանը, որին հադիպում են իրենց ամենօրյա աշխատանքում[31]: Հանրային և համայնքային ծառայողները նաև պարբերաբար կվերապատրաստվեն՝ ձեռք բերելով ճգնաժամային հաղորդակցության հմտություններ:

Հաղորդակցության և տեղեկատվության ստորաբաժաններում ներգրավված աշխատակիցների համար կմշակվի սոցիալական ցանցերում հաղորդակցության իրականացման և ակտիվության ուղեցույց: Այս բաղադրիչում առանցքային կլինի մասնագիտացած ՔՀԿ-ների աջակցության և նրանց հետ համագործակցության դերը:

[31] Որպես օրինակ կարող են ծառայել Շվեդիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների մշակած ուղեցույցներն այս թեմայով https://3x7ip91ron4ju9ehf2unqrm1-wpengine.netdna-ssl.com/wp-content/uploads/2020/03/RESIST-Counter-Disinformation-Toolkit.pdf և https://www.msb.se/RibData/Filer/pdf/28698.pdf: